Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
օգոստոսի 3-ի N 1317 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՋՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ՋԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՆԱԽԿԻՆ ՋԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՏՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Ջոհված (մահացած) կամ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված դեպքերում անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի (կամ հավասարեցված անձի) ընտանիքի անդամը ներկայացնում է՝

1) զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կամ իրավասու պետական մարմնի կադրային (անձնակազմի կառավարման) գործառույթներ իրականացնող ստորաբաժանման կամ վարույթ իրականացնող մարմնի կողմից տրված տեղեկանքը (տեղեկատվությունը)՝ զինծառայողի (կամ հավասարեցված անձի) զոհվելու (մահանալու) կամ անհայտ կորելու հանգամանքների, տեղի և ժամանակի մասին.

2) անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված լինելու դեպքում՝ համապատասխան դատական ակտի բնօրինակը և դրա պատճենը (բնօրինակը ենթակա է վերադարձման).

3) զինվորական ծառայությունից հետո անձի մահվան պատճառական կապի վերաբերյալ իրավասու բժշկասոցիալական փորձաքննական մարմնի կամ անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի որոշման բնօրինակը և դրա պատճենը (բնօրինակը ենթակա է վերադարձման).

4) իր անձնագրի (նույնականացման քարտի) բնօրինակը և դրա պատճենը (բնօրինակը ենթակա է վերադարձման).

5) զինծառայողի (կամ հավասարեցված անձի) ծննդյան և մահվան վկայականներն ու դրանց պատճենը (վկայականները ենթակա են վերադարձման).

6) զոհված (մահացած) զինծառայողի (կամ հավասարեցված անձի) ամուսնու, 18 տարին չլրացած երեխաների, անգործունակ ճանաչված կամ մինչև 26 տարեկան ուսանող կամ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող զավակների (եթե հաշմանդամություն ունեցող են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը) և ծնողների անձնագրերի (նույնականացման քարտերի), ամուսնության (ամուսնալուծության), ծննդյան (մահվան) վկայականների, հաշմանդամության սահմանման վերաբերյալ իրավասու մարմնի որոշման, ուսանող հանդիսանալու փաստը հավաստող տեղեկանքի, նրանց հաշվառման վայրի տեղեկանքի բնօրինակները և պատճենները (բնօրինակները ենթակա են վերադարձման).

7) խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշումը և դրա պատճենը՝ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 26 տարեկան ուսանող կամ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող քրոջ և եղբոր (եթե հաշմանդամություն ունեցող են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը) նկատմամբ խնամակալություն սահմանված լինելու, ինչպես նաև ծնողների՝ աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունենալու և նրանց հաշվառման վայրի տեղեկանքների բնօրինակներն ու պատճենները (բնօրինակները ենթակա են վերադարձման):

2. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողը (կամ հավասարեցված անձը) ներկայացնում է՝

1) ստացած վնասվածքի կամ ձեռք բերած հիվանդության պատճառական կապի վերաբերյալ իրավասու պետական մարմնի փորձագիտական եզրակացության բնօրինակը և դրա պատճենը (բնօրինակը ենթակա է վերադարձման).

2) հաշմանդամության խմբի սահմանման կամ ֆունկցիոնալության աստիճանի սահմանափակման փաստը հաստատող՝ բժշկասոցիալական փորձաքննության կամ անձի ֆունկցիոնալության գնահատման որոշման բնօրինակը և դրա պատճենը (բնօրինակը ենթակա է վերադարձման).

3) իր անձնագրի (նույնականացման քարտի) բնօրինակը և դրա պատճենը (բնօրինակը ենթակա է վերադարձման).

4) տեղեկանք ընտանիքի կազմի և հաշվառման վայրի մասին.

5) ¾ չափսի մեկ լուսանկար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

03.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ